

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ԱԶԴԱՐԱՐ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
(20 փետրվարի 1994 թ.)

Սիրեցյալ բարեպաշտ ժողովուրդ,

Ինչպես հայտնի է մեզ բոլորիս, հայ ժողովրդի ճակատագիրը իր Մայր Հայրենիքում եղել է չափազանց ողբերգական, հատկապես Բագրատունյաց մեր թագավորության անկումից հետո, ԺԲ դարից հետո: Այնպիսի ծանր պայմանների մեջ գտնվել է մեր ժողովուրդը, որ ստիպվել է հաճախ իր հայրենիքը թողնել և հեռանալ հեռավոր ափեր՝ դեպի Ղրիմ, Լեհաստան, Մոլդավիա, դեպի Մերձավոր Արևելք, դեպի Պարսկաստան՝ Շահ-Աբասի բռնագաղթի առիթով, դեպի Ռուսաց երկրներ, նույնիսկ մինչև Հնդկաստան: Այս տխուր պատկերը մի պահ եթե նկատի ունենանք, կանդրադառնանք մեր ազգի՝ իրապես ողբերգական պատմության, այդ դարաշրջանին:

Երկար է Հայոց ողբերգությունների և տառապանքների պատմությունը: Բայց, այնուամենայնիվ, այս ծանր պայմանների տակ հայերը ուր որ գնացել են, այլ երկրներ բնակվելու համար, նրանց սեպուհ պարտականությունն է եղել կառուցել աղոթքի տներ, հայկական եկեղեցիներ: Շատ տեղերում հիմնել են նույնիսկ կրթական հաստատություններ, դպրոցներ և այլ մշակութային կամ բարեսիրական միություններ, նույնիսկ երիտասարդական կազմակերպություններ, ինչպես Մոլդավիայում, որպեսզի պահպանեն իրենց ազգային և հոգևոր ինքնությունը: Կարող ենք ասել, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը տևապես պայքարել է իր հոգևոր-ազգային ինքնությունը պահպանելու համար և ընդհանրապես հաջողվել է նրան այդ կատարել՝ հակառակ դաժան պայմաններին երբեմն:

Ահա այսպես հիմնվել է նաև ԺԷ դարի շրջանում Հնդկահայոց գաղութը՝ կենտրոնացած երեք մեծ քաղաքներում՝ Կալկաթա, Բոմբեյ և Մադրաս: Այդ երեք քաղաքներում այսօր էլ կտեսնենք բազմաթիվ հուշարձաններ, որոնք պատմում են հայ գաղթականության կյանքի մասին վերջին երկուերեք հարյուր տարիների շրջանում: ԺԸ դարու վերջավորության լուսավոր մի պահ է ճառագայթում Հնդկահայոց կյանքում և առհասարակ հայ ժողովրդի կյանքում, երբ Մադրաս քաղաքում ուղիղ երկու հարյուր տարի առաջ վառվում է մի ճրագ, լույսը հայ գրի և գրականության: Առաջին ան-

գամ լինելով, այնտեղ բնակվող Հարություն քահանա Շմավոնյան, համեստ, բայց գրագետ ու պայծառամիտ անձնավորություն, հրապարակում է առաջին հայկական պարբերաթերթը «Ազդարար» անունով, 1794 թվականին: Երկար կյանք չի ունեցել «Ազդարարը», սակայն հանդիսացել է նախակարապետը, հիմնադիրը հայ մամուլի:

Մենք, մանավանդ այսօր, երբ ապրում ենք մեր անկախ Հայկական հանրապետության հովանու ներքև և նախանձախնդիր ենք, որ պահպանվի ազգային ոգին բոլոր բնագավառներում, պարտք ենք համարում մեզ չմոռանալ սուրբ հիշատակը Հարություն քահանայի և փառաբանել նրա գործը:

Ես ուրախ եմ, որ մի քանի օր առաջ ինձ այցելեց մեր Հանրապետության մշակույթի նախարար տիար Հակոբ Մովսես՝ առաջարկ բերելով, որ հանդիսավոր հոգեհանգիստ կատարենք Մայր տաճարում և օրհնենք, օծենք մի հայկական խաչքար, հատուկ պատրաստված, որ մոտ օրերս պիտի տեղափոխեն Մադրաս, որպեսզի զետեղեն այդ խաչքարը Հարություն քահանա Շմավոնյանի գերեզմանի վրա, հայ եկեղեցու կողքին: Մենք հպարտ ենք, որ հայ պարբերաթերթի հիմնադիրը մի հայ քահանա է եղել: Մենք հպարտ ենք, որ հայ մամուլը հետագա տարիներին զարգացել է մինչև մեր օրերը: Այսօր Մայր Հայրենիքում և արտասահմանում ամեն հայի ընտանիքում ամենօրյա սնունդ է հանդիսանում հայ թերթը և ամսաթերթը: Մենք հպարտ ենք նաև, որ պատեհությունը ունենք և հոգեկան մխիթարությունը այսօր օրհնելու և օծելու այս խաչքարը, որ պիտի փոխադրվի Մադրաս: Ես հատկապես գոհ եղա, որ մեր մշակույթի նախարարը՝ պարոն Մովսես, առաջարկեց ինձ, որ հատուկ կոնդակ գրեմ «Ազդարար»-ի լույս ընծայման երկուհարյուրամյակի առթիվ: Քիչ հետո պիտի աղոթենք հոգեհանգստյան պահին, որ Տերը միշտ պայծառ պահե հիշատակը Հարություն քահանա Շմավոնյանի թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, մեր կյանքում: Եվ թող Աստված ուժ և կարողություն և նորանոր ներշնչանքներ պարգևի մեր ժողովրդի զավակներին, որպեսզի նաև հետ այսու և հավիտյան ծաղկի, փառավորվի հայ գիրն ու գրականությունը և հայ մամուլը:

Օրհնություն Հարություն քահանա Շմավոնյանի հիշատակին: Օրհնություն նաև ձեզ բոլորիդ, սիրելի հավատացյալներ:

«Ողջ լերուք, զօրացեալք Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ»: Ամեն: